ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիս, 2024 թվականի № 37-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 21-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի մայիսի 8-ի N ՀՄ-02/325/24 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները և օրենսդրական պահանջները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2023 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հաստատել Ընկերության 2023 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:

3. Հաստատել Ընկերության 2023 թվականի տարեկան դրամական հոսքերի նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

14 մայիս, 2024 թվականի

ք. Երևան